



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՎԵՐԻՆ ՊՏՂՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Վերին Պտղնի համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Վերին Պտղնի 2-րդ փողոց թիվ 48, հեռ. 060517670,
էլ.փոստ verinptghni.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

28 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ N 52-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՎԵՐԻՆ ՊՏՂՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 28-Ի ԹԻՎ 14 ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 14-րդ և 17-րդ հոդվածների պահանջներով՝

Համայնքի ավագանին որոշում է՝

Հաստատել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Վերին Պտղնի համայնքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 28-ի թիվ 14 արտահերթ նիստի օրակարգը

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Վերին Պտղնի համայնքի վարչական տարածքի 2021 թվականի տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը սահմանելու մասին:
2. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Վերին Պտղնի համայնքի ղեկավարի 2021 թվականի վարձատրության չափը սահմանելու մասին:
3. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Վերին Պտղնի համայնքապետարանի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը 2021 թվականի համար հաստատելու մասին:
4. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Վերին Պտղնի համայնքի ղեկավարի 2021 թվականի կամավոր լիազորությունների իրականացման կարգը հաստատելու մասին:
5. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Վերին Պտղնի համայնքի 2021 թվականի տարեկան աշխատանքային պլանը հաստատելու մասին:
6. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Վերին Պտղնի համայնքի ավագանու անդամի լիազորությունների վաղաժամկետ դադարեցման մասին:
7. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Վերին Պտղնի Համայնքի ավագանու 2021 թվականի հերթական նիստերի գումարման ժամանակացույցը հաստատելու մասին:
8. Հողամասի նպատակային և գործառնական նշանակության փոփոխման մասին:

9. «Վերին Պտղնի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ին նոր ջեռուցման համակարգի անցկացման համար համայնքի բյուջեից կապիտալ դրամաշնորհի տեսքով գումարային աջակցություն հատկացնելու մասին:
10. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Վերին Պտղնի Վերին Պտղնի համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերից 2021 թվականի ընթացքում օտարման և օգտագործման /վարձակալության / իրավունքով տրամադրման համար նախատեսվող հողամասերի ցուցակը հաստատելու մասին:/
11. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Վերին Պտղնի Վերին Պտղնի համայնքի 2021 թվականի տարեկան բյուջեն հաստատելու մասին:

Կողմ -4

Դեմ -0

Ձեռնպահ -0

1. ԱԼԵԲՅԱՆՅԱՆ ԱՇՈՏ



2. ԳԱՍՊՈՐՅԱՆ ԱՇՈՏ



3. ԳՐԻԳՈՐՅԱՆ ՀԱՍԼԵՏ



4. ՄՈՎԱՅԵՍՅԱՆ ԿԱՐԵՆ



ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Թ/Պ՝



ՅՈՒ. ԳԵՎՈՐԳՅԱՆ





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՎԵՐԻՆ ՊՏՂՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Վերին Պտղնի համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Վերին Պտղնի 2-րդ փողոց թիվ 48, հեռ. 060517670,
էլ.փոստ verinptghni.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

28 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ N 53-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՎԵՐԻՆ ՊՏՂՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱԶԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ և 19-րդ կետերով, «Տեղական տուրքերի և վճարների մասին» օրենքի 7, 8, 9, 10, 11, 12, 13, 14-րդ հոդվածների և «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» օրենքի պահանջներով.

Համայնքի ավագանին որոշում է՝

1. Սահմանել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Վերին Պտղնի համայնքի վարչական տարածքի 2021 թվականի տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրը:

Կողմ -4

Դեմ -0

Ձեռնպահ -0

1. ԱԼԵՔՍԱՆՅԱՆ ԱԵՈՏ

2. ԳԱՍՊԱՐՅԱՆ ԱԵՈՏ

3. ԳՐԻԳՈՐՅԱՆ ՀԱՄԼԵՏ

4. ՄՈՎՍԵՅԱՆ ԿԱՐԵՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ/Պ՝



ՅՈՒ. ԳԵՎՈՐԳՅԱՆ



**ՎԵՐԻՆ ՊՏՂՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2021ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ
ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱԶԱՓԵՐԸ**

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Վերին Պտղնի համայնքում սահմանել տեղական ռուբլեների հետևյալ դրույքաչափերը՝ կիրառելով տարբեր գործակիցներ՝

1) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված արտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում նոր ենքերի, շինությունների և ոչ հիմնական շինությունների շինարարության (տեղադրման) (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության թույլտվություն պահանջող դեպքերի) թույլտվության համար.

հիմնական շենքերի և շինությունների համար՝

ա. մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ շքեզորձական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության շենքերի և շինությունների համար՝ 5000դրամ X 0,5= 7500 դրամ.

և. սույն կետի «ա» ենթակետով չնախատեսված շենքերի և շինությունների համար՝

200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 10000 դրամ X 0,5= 15000 դրամ.

500-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 20000 դրամ X 0,5= 25000դրամ.

1000-ից մինչև 3000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 30000 դրամ X 0,5= 25000դրամ.

3000-ից և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 40000 դրամ X 0,5= 50000դրամ.

յ. **հիմնական շենքերի և շինությունների համար՝**

մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 3000 դրամ X 0,5= 1500դրամ.

20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 5000 դրամ X 0,5= 2500դրամ.

դ) համայնքի վարչական տարածքում գոյություն ունեցող շենքերի և շինությունների, վերակառուցման, վերականգնման, ուժեղացման, արդիականացման և բարեկարգման աշխատանքների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության թույլտվություն պահանջվող դեպքերի) համար, եթե սահմանված կարգով հաստատված արտարապետաշինարարական նախագծով՝

ա. չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ ենքերի գործառական նշանակության փոփոխություն՝ տեղական տուրքը սահմանվում է՝ 3000 դրամ X 0,5= 1500 դրամ.

և. բացի շենքերի և շինությունների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի դրամաչափային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, և, բացի սույն կետի «ա» ենթակետով սահմանված դրույքաչափի, կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն հավելվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված նորմերը և դրույքաչափերը՝ շենքերի և շինությունների ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքերի գործառական նշանակության փոփոխության մասով.

բ. նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) շինարարություն կամ շենքերի գործառական

նշանակության փոփոխություն, ապա, այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում է նոր շինարարության համար սույն հավելվածի 1-ին կետով սահմանված նորմերը և դրույքաչափերը:

3) համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ քանդման թույլտվություն չպահանջող դեպքերի) թույլտվության համար տեղական տուրք սահմանել 5000 դրամ $\times 0,5 = 2500$ դրամ.

4) համայնքի վարչական տարածքում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի վաճառքի թույլտվության համար՝ տեղական տուրքը սահմանվում է օրացուցային տարվա համար՝ 200000 դրամ $\times 0,75 = 150000$.

5) Համայնքի վարչական տարածքում գտնվող խանութներում, կրպակներում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում կամ ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման և նորոգման ծառայության օբյեկտներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը օրացուցային տարվա համար սահմանվում է՝ 60000 դրամ $\times 0,75 = 45000$ դրամ.

6) համայնքի վարչական տարածքում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի մանրածախ առուվաճառք իրականացնելու թույլտվության համար տեղական տուրք օրացուցային տարվա համար սահմանվում է՝ 100000 դրամ $\times 0,5 = 50000$ դրամ.

7) համայնքի վարչական տարածքում ոգելից և ալկոհոլային խմիչքների և (կամ) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է՝

ա. ոգելից և ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար, յուրաքանչյուր եռամսյակի համար՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 9000 դրամ $\times 0,3 = 2700$ դրամ.

- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 10800 դրամ $\times 0,3 = 3240$ դրամ.

- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 13100 դրամ $\times 0,3 = 3930$ դրամ.

- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 20100 դրամ $\times 0,3 = 6030$ դրամ.

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 25100 դրամ $\times 0,3 = 7530$ դրամ.

- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 45100 դրամ $\times 0,3 = 13530$ դրամ.

բ. ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 9000 դրամ $\times 0,3 = 2700$ դրամ.

- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 10800 դրամ $\times 0,3 = 3240$ դրամ.

- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 13100 դրամ $\times 0,3 = 3930$ դրամ - 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 20100 դրամ $\times 0,3 = 6030$ դրամ.

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 25100 դրամ $\times 0,3 = 7530$ դրամ.

- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 45100 դրամ $\times 0,3 = 13530$ դրամ.

8) իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերին համայնքի վարչական տարածքում <<Առևտրի և ծառայությունների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված շաքարա առևտրի կազմակերպման թույլտվության համար, յուրաքանչյուր օրվա համար՝ 350 դրամ մեկ քառակուսի մետրի համար.

9) համայնքի վարչական տարածքում առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտներին, խաղատներին և բաղնիքներին (սաունաներին) ժամը 24⁰⁰-ից հետո աշխատելու թույլտվության համար՝ տեղական տուրքը օրացուցային տարվա համար սահմանվում է՝

բ. հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝ 50000 դրամ.

գ. բաղնիքների (սաունաների) համար՝ 200000 դրամ.

դ. խաղատների համար՝ 800000 դրամ.

ե. շահումով խաղերի համար՝ 350000 դրամ.

զ. վիճակախաղերի համար՝ 120000 դրամ.

10) համայնքի վարչական տարածքում համայնքային կանոններին համապատասխան, հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր տնամայակի համար սահմանվում է՝

ա. հիմնական շինությունների ներսում՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 5000 դրամ $\times 0,3 = 1500$ դրամ.

- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 10000 դրամ $\times 0,3 = 3000$ դրամ.

- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 15000 դրամ $\times 0,3 = 4500$ դրամ.

- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 20000 դրամ $\times 0,3 = 6000$ դրամ.

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 23000 դրամ $\times 0,3 = 6900$ դրամ.

- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 31100 դրամ $\times 0,3 = 9330$ դրամ.

բ. ոչ հիմնական շինությունների ներսում՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 1000 դրամ $\times 0,3 = 300$ դրամ.

- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 2000 դրամ $\times 0,3 = 600$ դրամ.

- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 4000 դրամ $\times 0,3 = 1200$ դրամ.

- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 6000 դրամ $\times 0,3 = 1800$ դրամ.

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 10000 դրամ $\times 0,3 = 3000$ դրամ.

- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 20000 դրամ $\times 0,3 = 6000$ դրամ.

11) համայնքի վարչական տարածքում արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար տեղական տուրք սահմանվում է յուրաքանչյուր ամիս մեկ քառակուսի մետրի համար՝

ա. ակոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 2000 դրամ.

բ. թունդ ակոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 3500 դրամ.

գ. սոցիալական գովազդի համար՝ 0 դրամ.

դ. այլ արտաքին գովազդի համար՝ 1500 դրամ.

ե. դատարկ գովազդային վահանակների համար՝ համայնքի վարչական տարածքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 25%-ի չափով.

զ. եթե արտաքին գովազդ տարածող գովազդակիրը տեղաբաշխել և տարածել է իր կազմակերպության գովազդը՝ համայնքի վարչական տարածքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 10%-ը:

12) Վերին Պտղնի համայնքի խորհրդանիշերը (զինանշան, անվանումը և այլն) որպես օրենքով գրանցված ապրանքային նշան՝ ապրանքների արտադրության, աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման գործընթացներում օգտագործելու թույլտվության համար տեղական տուրք սահմանվում է օրացուցային տարվա համար 100000 դրամ $\times 0,5 = 50000$ դրամ.

13) համայնքի վարչական տարածքում մարդատար տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների՝ միկրոավտոբուսների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար տեղական տուրքը օրացուցային տարում յուրաքանչյուր մեքենայի համար սահմանվում է՝ 10000 դրամ $\times 0,5 = 5000$ դրամ.

ծծիսակատարության ծառայությունների թույլտվության համար, տեղական տուրքը օրացուցային տարվա համար սահմանվում է $500000 \times 0,75 = 375000$ դրամ:

- 15) համայնքի վարչական տարածքում մասնավոր գերեզմանատան կազմակերպման և շահագործման թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է օրացուցային տարվա համար՝
- ա. 3 հա-ից մինչև 5 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ 2500000 դրամ.
 - բ. 5 հա-ից մինչև 7 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ 5000000 դրամ.
 - գ. 7 հա-ից մինչև 10 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ 7000000 դրամ.
 - դ. 10 հա-ից ավել մակերես ունեցող գերեզմանատների համար՝ 10000000 դրամ:

2. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Վերին Պտղնի համայնքում սահմանել տեղական վճարների հետևյալ դրույքաչափերը՝

1) ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված շինարարության թույլտվություն պահանջող, բոլոր շինարարական աշխատանքներն իրականացնելուց հետո շենքերի և շինությունների (այդ թվում՝ դրանց վերակառուցումը, վերականգնումը, ուժեղացումը, արդիականացումը, ընդլայնումն ու բարեկարգումը) կառուցման ավարտը ավարտական ակտով փաստագրման ձևակերպման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանվում է՝ 5000 դրամ:

2) համայնքի տնօրինության և օգտագործման ներքո գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքերում փաստաթղթերի (փաթեթի) նախապատրաստման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանվում է՝ 45000 դրամ:

3) համայնքի կողմից կազմակերպվող մրցույթների և աճուրդների մասնակցության համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանվում է՝ 10000 դրամ:

4) համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ տրամադրելու համար՝ մեկ փաստաթղթի համար՝ 500 դրամ:

5) 1. Աղբահանության վճարը սահմանվում է՝

- 1) կենցաղային աղբի համար՝
ա. ըստ հաշվառված անձանց քանակի՝ համայնքում անձնագրային հաշվառման կանոններով ըստ հասցեի հաշվառում ունեցող և (կամ) բնակվող յուրաքանչյուր բնակչի համար՝ ամսական 150 դրամ,
- 2) ոչ կենցաղային և խոշոր եզրաչափի աղբի համար՝
ա. ըստ ծավալի՝ մեկ խորանարդ մետր աղբի համար՝ 1000 դրամ, կամ
բ. ըստ զանգվածի՝ մեկ տոննա աղբի համար՝ 3000 դրամ:



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՎԵՐԻՆ ՊՏՂՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Վերին Պտղնի համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Վերին Պտղնի 2-րդ փողոց թիվ 48, հեռ. 060517670,
էլ. փոստ verinptghni.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

28 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ N 54-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՎԵՐԻՆ ՊՏՂՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅԱՆ ՉԱՓԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետով

Համայնքի ավագանին որոշում է՝

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Վերին Պտղնի համայնքի ղեկավարի 2021 թվականի վարձատրության չափը սահմանել ամսական 250000 (երկու հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամ:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2021 թվականի հունվարի 1-ից:

Կողմ -4

Ձեռնպահ -0

Դեմ -0

1. ԱԼԵՔՍԱՆՅԱՆ ԱՇՈՏ

2. ԳԱՍՊԱՐՅԱՆ ԱՇՈՏ

3. ԳՐԻԳՈՐՅԱՆ ՀԱՄԼԵՏ

4. ՄՈՎՍԵՅԱՆ ԿԱՐԵՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐԻ Ժ/Պ՝



ՅՈՒ. ԳԵՎՈՐԳՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՎԵՐԻՆ ՊՏՂՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Վերին Պտղնի համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Վերին Պտղնի 2-րդ փողոց թիվ 48, հեռ. 060517670,
Էլ. փոստ verinptghni.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

28 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ N 55-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՎԵՐԻՆ ՊՏՂՆԻ
ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ,
ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱԶՎՓԵՐԸ 2021 ԹՎԱԿԱՆԻ
ՀԱՄԱՐ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետով.

Համայնքի ավագանին որոշում է՝

- Հաստատել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Վերին Պտղնի համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը 2021 թվականի համար՝ համաձայն հավելվածի:
- Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2021 թվականի հունվարի 1-ից:

Կողմ -4

Չեղծակա -0

Դեմ -0

1. ԱԼԵՔՍԱՆՅԱՆ ԱՇՈՏ

2. ԳԱՄՊԱՐՅԱՆ ԱՇՈՏ

3. ԳՐԻԳՈՐՅԱՆ ՀԱՍԼԵՏ

4. ՄՈՎՍԵՅԱՆ ԿԱՐԵՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ/Պ՝



ՅՈՒ. ԳԵՎՈՐԳՅԱՆ

ՀԱՍՏԻՔԱՌՈՒԹԱԿ

Վերին Պտղիկի իրանյնբաբետարանի աշխատակազմի



Հավելված
Վերին Պտղիկի իրանյնբաբետարանի
2020թվականի դեկտեմբերի 28-ի թիվ 55-Ա որոշման

Աշխատակիցների թվաքանակներ՝ 12

Հ/հ	Կազմակերպության անվանումը	Հաստիճի անվանումը	Հաստիճի տեսակը	Պաշտոնի ծածկագիր	հաստի քային միավոր	Պաշտոնային դրույքաչափը	Հավելումը	Հավելվածաբար	Աշխատավարձի չափը
1	2	3	4	5	6	7	8	9	10
1		Համայնքի ղեկավար	Քաղաքական	-	1	250000	-	-	250000
2		Համայնքի ղեկավարի տեղակալ	Քաղաքական	-	1	200000	-	-	200000
3		Համայնքի ղեկավարի տեղակալ	Քաղաքական	-	1	200000	-	-	200000
4		Համայնքի ղեկավարի տեղակալ	Հայեցողական	-	1	180000	-	-	180000
5	Համայնքապետարանի աշխատակազմ	Աշխատակազմի քարտուղար	Համայնքային ծառայության	1.2-1	1	195000	-	-	195000
6		Սուսջատար մասնագետ	Համայնքային ծառայության	3.1-1	1	193000	-	9650	202650
7		1-ին կարգի մասնագետ	Համայնքային ծառայության	3.2-1	1	155000	-	23250	178250
8		2-րդ կարգի մասնագետ	Համայնքային ծառայության	3.3-1	1	152000	-	15200	167200
9		Հավաքարար	Տեխնիկական	-	1	109000	-	-	109000
10		Վարորդ	Տեխնիկական	-	1	120000	-	-	120000
11		Վարորդ	Տեխնիկական առաստաղում	-	1	120000	-	-	120000
12		Բանկիր	Տեխնիկական առաստաղում	-	1	95000	-	-	95000
	Ընդամենը				12	1969000	-	48100	2017100



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՎԵՐԻՆ ՊՏՂՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Վերին Պտղնի համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Վերին Պտղնի 2-րդ փողոց թիվ 48, հեռ. 060517670,
էլ. փոստ verinptghni.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

28 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ N 56-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՎԵՐԻՆ ՊՏՂՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԿԱՄԱՎՈՐ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով՝

Համայնքի ավագանին որոշում է՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Վերին Պտղնի համայնքի ղեկավարի 2021 թվականի կամավոր լիազորությունների իրականացման կարգը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ -4

Ձեռնպահ -0

Դեմ -0

1. ԱԼԵԲՍԱՆՅԱՆ ԱՇՈՏ

2. ԳԱՍՊԱՐԹԱՆ ԱՇՈՏ

3. ԳՐԻԳՈՐՅԱՆ ՀԱՍԼԵՏ

4. ՄՈՎՍԵՍՅԱՆ ԿԱՐԵՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐԻ Ժ/Պ՝



ՅՈՒ. ԳԵՎՈՐԳՅԱՆ



ԿԱՐԳ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ

ՎԵՐԻՆ ՊՏՂՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ

ԿԱՄԱՎՈՐ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ

1. Սույն կարգով սահմանվում է Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Վերին Պտղնի համայնքի ղեկավարի՝ (այսուհետ՝ համայնքի ղեկավար) կամավոր լիազորությունների (այսուհետ՝ լիազորություններ) իրականացման կարգը:

2. Լիազորությունների իրականացման կարգը սահմանվում է «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի համաձայն:

3. Կամավոր լիազորությունների իրականացման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցները տրամադրվում են սովյալ տարվա համայնքի բյուջեով նախատեսված ֆինանսավորմանը համապատասխան:

4. Համայնքի ղեկավարը կամավոր լիազորություններ իրականացնում է հետևյալ քնազավառներում՝

4.1 Պաշտպանության կազմակերպման քնազավառ

1) քաղաքացիական պաշտպանության մարմինների գործունեության համար տրամադրել դրամական օգնություն մինչև 50000 ՀՀ դրամի չափով:

2) պարտադի ժամկետային զինձառայողների ընտանիքների սոցիալական պաշտպանվածության բարելավման, պատերազմի վետերանների և զոհված ազատամարտիկների ընտանիքների սոցիալական խնդիրների լուծման համար տրամադրել դրամական օգնություն մինչև 50000 ՀՀ դրամի չափով :

4.2 Կրթության, մշակույթի և երիտասարդության հետ տարվող աշխատանքների քնազավառ

1) Վերին Պտղնի միջնակարգ դպրոցին տրամադրել դրամաշնորհի մինչև 300000 ՀՀ դրամի չափով:

2) Վերին Պտղնի միջնակարգ դպրոցի շրջանավարտներին վերջին զանգի կապակցությամբ տրամադրել դրամական աջակցություն մինչև 10000 ՀՀ դրամի չափով:

3) Վերին Պտղնի միջնակարգ դպրոցի առաջին դասարան հաճախող երեխաներին սեպտեմբերի 1-ի կապակցությամբ նվիրել զրեճական պիտույքներ յուրաքանչյուրին մինչև 10000 ՀՀ դրամի չափով:

4) Վերին Պտղնի համայնքում քնակվող ուսանողների ուսման վարձի մասնակի փոխհատուցում մինչև 150 000 ՀՀ դրամի չափով :

5) Վերին Պտղնի համայնքում քնակվող բարձր առաջադիմությամբ (զերազանց սովորող) ուսանողներին՝ ուսումը խրախուսելու նպատակով , տալ պարգևատրում մինչև 50000 ՀՀ դրամի չափով:

6) Ամանորյա նվերներ և միջոցառման կազմակերպման համար մինչև 200000 ՀՀ դրամի չափով:

4.3 առողջապահության, ֆիզիկական կուլտուրայի և սպորտի քնազավառ

Վերին Պտղնի առողջության առաջնային պահպանման կենտրոնին տրամադրել դրամաշնորհի մինչև 200000 ՀՀ դրամ:

4.4 Աշխատանքի և սոցիալական ծառայության քնազավառ

1) հաշմանդամների, կերակրողին կորցրած ընտանիքների, սոցիալապես անապահով այլ խավերի սոցիալական պայմանների բարելավման համար յուրաքանչյուր դիմող քնակչին տրամադրել դրամական աջակցություն մինչև 150000 ՀՀ դրամի չափով:

2) Համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցներին արձակուրդի տրամադրման հետ մեկտեղ վճարել բուժման գումար մեկ ամսվա աշխատավարձի չափով:

3) Համայնքապետարանի աշխատակազմի կին աշխատողներին մարտի 8-ի կանաչ միջազգային օրվա կապակցությամբ տալ ֆինանսական աջակցություն մինչև 50000 ՀՀ դրամի չափով:

5. Համայնքի ղեկավարը կամավոր լիազորություններն իրականացնում է համայնքապետարանի աշխատակազմի միջոցով:



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՎԵՐԻՆ ՊՏՂՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Վերին Պտղնի համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Վերին Պտղնի 2-րդ փողոց թիվ 48, հեռ. 060517670,
էլ. փոստ verinptghni.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

28 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ N 57-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՎԵՐԻՆ ՊՏՂՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնկառավարման մասին» օրենքի 13-րդ հոդվածի
10-րդ մասի պահանջների՝

Համայնքի ավագանին որոշում է

- Հաստատել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Վերին Պտղնի համայնքի 2021 թվականի տարեկան աշխատանքային պլանը համաձայն հավելվածի:
- Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Կողմ -4

Զեռնպահ -0

Դեմ -0

1. ԱԼԵՔՍԱՆՅԱՆ ԱԵՈՏ

2. ԳԱՍՊԱՐՅԱՆ ԱԵՈՏ

3. ԳՐԻԳՈՐՅԱՆ ՀԱՍԼԵՏ

4. ՄՈՎՍԵՅԱՆ ԿԱՐԵՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ/Պ՝



ՅՈՒ. ԳԵՎՈՐԳՅԱՆ

**ՀՀ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ՎԵՐԻՆ ՊՏՂՆԻ ՀԱՄԱՅՆՔ
ՀԱՄԱՅՆՔԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ
ՏԱՐԵԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆ**



Կազմել է՝ համայնքի ղեկավարի ժ/պ ՅՈՒՐԻ ԳԵՎՈՐԳՅԱՆԸ
Հաստատվել է՝ համայնքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 28-
ի թիվ 57-Ա որոշմամբ

ՎԵՐԻՆ ՊՏՂՆԻ, 2020



Բովանդակություն

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.....	3
1. ՀԱՄԱՅՆՔԻ ՏԵՍԼԱԿԱՆԸ և ՈԼՈՐՏԱՅԻՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ.....	
3	
2. ՀԱՄԱՅՆՔԻ 2020Թ. ԾՐԱԳՐԵՐԻ ՑԱՆԿԸ և ՏՐԱՄԱՔԱՆԱԿԱՆ ՀԵՆՔԵՐԸ (ԸՍՏ ՈԼՈՐՏՆԵՐԻ)	8
3. ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԳՈՒՅՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ 2020Թ. ԾՐԱԳԻՐԸ	
25	
4. ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՊ-Ի ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՊԼԱՆԸ	25
5. ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՊ-Ի ՄՈՆԻՏՈՐԻՆԳԻ և ԳՆԱՀԱՏՄԱՆ ՊԼԱՆԸ	
26	

Ներածություն

Սույն տարեկան աշխատանքային պլանը (ՏԱՊ-ը) մշակվել է համայնքի հնգամյա զարգացման ծրագրով (ՀՀԶԾ-ով) սահմանված համայնքի տեսլականի, ռազմավարության, ոլորտային նպատակների և ծրագրերի իրականացման նպատակով՝ ելնելով 2020թ. ֆինանսավորման կոնկրետ հնարավորություններից և անհետաձգելի կատարման ենթակա աշխատանքներից:

ՏԱՊ-ի մշակման մեթոդական հիմք է հանդիսացել «Համայնքների ֆինանսիստների միավորում» ՀԿ-ի փորձագետների կողմից 2017 թվականին պատրաստված «Համայնքի տարեկան աշխատանքային պլանի մշակման» մեթոդական ուղեցույցը:

ՏԱՊ -ում ի մի են բերվել համայնքի միջոցներից 2021թ. ֆինանսավորվող ծրագրերն ու միջոցառումները, որը հնարավորություն կտա ապահովել Վերին Պտղնի համայնքի համամասնական զարգացումը, ուշադրության կենտրոնում պահելով շարունակական լուծում պահանջող և ՀՀԶԾ-ով առաջ քաշված հիմնախնդիրները:

ՏԱՊ -ի 1-ին բաժնում ներկայացված են համայնքի տեսլականը և ոլորտային նպատակները, 2-րդ բաժնում բերված են համայնքի 2021թ. ծրագրերի ցանկը և նրանց տրամաբանական հենքերը, 3-րդ բաժնում՝ համայնքի գույքի կառավարման 2021թ. ծրագիրը, 4-րդ բաժնում՝ համայնքի ՏԱՊ-ի ֆինանսավորման պլանը, իսկ 5-րդ բաժնում՝ համայնքի ՏԱՊ-ի մոնիթորինգի և գնահատման պլանը:

1. Համայնքի տեսլականը և ոլորտային նպատակները

Համայնքի տեսլականը՝

Վերին Պտղնի երիտասարդ զբաղված բնակչությամբ, զարգացած ենթակառուցվածքներով, բարեկարգ, մաքուր և լաավոր փողոցներով համայնք է:

Ստորև ներկայացված են համայնքի կայուն զարգացման ցուցանիշները: Ցուցանիշի ելակետային արժեքը՝ համապատասխան ցուցանիշի 2021 թվականի հունվարի 1-ի դրությամբ ֆիքսված արժեքին 2021 թվականի նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին կանխատեսվող ցուցանիշի ավելացումն է, հաշվի առնելով համայնքում առկա զարգացումները և միտումները, ինչպես նաև նախորդ տարիների փորձը: Ցուցանիշի թիրախային արժեքը՝ համապատասխան ցուցանիշի պլանավորվող արժեքն է, այսինքն՝ այն արժեքը, որին կհասնի համայնքը 2021 թվականին ՏԱՊ-ը հաջողությամբ իրականացնելու դեպքում:

ՏԱՊ-ում ոլորտների և ծրագրերի ազդեցության վերջնական արդյունքի որոշ որակական ցուցանիշների գնահատման համար կիրառվել է 10 բալանոց սանդղակ՝ 1-շատ վատ, 2 – վատ, 3 – բավականին վատ, 4 – ավելի շատ վատ, քան լավ, 5 – միջին՝ ոչ լավ- ոչ վատ, 6 - ավելի շատ լավ, քան վատ, 7 – բավականին լավ, 8 – լավ, 9 – շատ լավ, 10 – կատարյալ:

Աղյուսակ 1. Համայնքի կայուն զարգացման ցուցանիշները

Ցուցանիշ	Ելակետային արժեք	Թիրախային արժեք
Աղքատության շեմից ցածր գտնվող ընտանիքների թվի տեսակարար կշիռը համայնքի ընտանիքների ընդհանուր թվի մեջ (%)	2.0	1.0
Համայնքի քյուջեի սեփական եկամուտների տեսակարար կշիռը ընդհանուր եկամուտների մեջ (%)	110.0	100.0
Համայնքում հաշվառված բնակիչների ընդհանուր թիվը (մարդ)	1008	1010
Համայնքում գործող ՓՄՁ-ների քանակը և աշխատողների թիվը (մարդ)	62/270	65/350
Համայնքում տվյալ տարվա ընթացքում ներդրումների ծավալը (հազ. դրամ)	12000.0	18000.0

Ստորև սահմանված են համայնքի ոլորտային նպատակներ՝ ըստ համայնքի ղեկավարի լիազորությունների առանձին բնագավառների (ոլորտների):

Աղյուսակ 2. Համայնքի ոլորտային նպատակները

Ոլորտային նպատակ	Վերջնական արդյունքի՝		
	Ցուցանիշ	Ելակետային արժեք	Թիրախային արժեք
Ոլորտ 1. Ընդհանուր			
Բարելավել ՏԻՄ-երի, համայնքապետարանի աշխատակազմի կողմից համայնքի բնակչությանը մատուցվող հանրային ծառայությունների որակը:	Համայնքի բնակիչների բավարարվածությունը ՏԻՄ-երի աշխատակազմի կողմից մատուցված ծառայությունների որակից (սոց. հարցումներ)	Շատ լավ.	Կատարյալ
	Համայնքի քյուջեի սեփական եկամուտների տեսակարար կշիռը քյուջեի ընդհանուր մուտքերի կազմում (%)	95	100
Ոլորտ 2. Պաշտպանության կազմակերպում			
2020 թվականի ընթացքում ոլորտում ծրագրեր և	-	50.0	80.0

միջոցառումներ են նախատեսվում,			
Ոլորտ 3. Արտակարգ իրավիճակներից բնակչության պաշտպանություն և քաղաքացիական պաշտպանություն			
2021 թվականի ընթացքում ոլորտում ծրագրեր և միջոցառումներ են նախատեսվում,	-	50.0	80.0
Ոլորտ 4. Քաղաքաշինություն և կոմունալ տնտեսություն			
Իրականացնել բնակավայրային կոմունալ ենթակառուցվածքների ընդլայնման, բարեկարգման և պահպանման աշխատանքներ:	Գիշերային լուսավորության ցանցի տեսակարար կշիռը ներբնակավայրային ճանապարհային ցանցի մեջ (%)	80	100
	Գիշերային լուսավորվածությունից բնակիչների բավարարվածությունը (սոց. հարցումներ)	Բավականին լավ	Լավ
	Զրամատակարարման ծառայությունից բնակիչների բավարարվածության աստիճանի բարձրացում (սոց. հարցումներ)	Բավականին լավ	լավ
	Սպառված էլ.էներգիայի տարեկան ծախսումների նվազեցում - 5%-ով	25	30
Ոլորտ 5. Հողօգտագործում			
2021 թվականի ընթացքում ոլորտում ծրագրեր և միջոցառումներ չեն նախատեսվում, այդ պատճառով ոլորտային նպատակ չի սահմանվել:	-	-	-
Ոլորտ 6. Տրանսպորտի բնագավառ			
	Բարեկարգ անցանելի ներբնակավայրային ճանապարհների տեսակարար կշիռը ամբողջի մեջ (%)	85	90
	Բնակիչների բավարարվածությունը ճանապարհների վիճակից (սոց. հարցումներ)	Բավականին լավ	Լավ
Ոլորտ 7. Առևտուր և ծառայություններ			
2021 թվականի ընթացքում ոլորտում ծրագրեր և	-	-	-

միջոցառումներ չեն նախատեսվում, այդ պատճառով ոլորտային նպատակ չի սահմանվել:			
Ոլորտ 8. Կրթություն			
Բարձրացնել համայնքում կրթության որակը և մատչելիությունը:	Նախակրթարանում ընդգրկվածությունից և կրթության որակից ծնողների բավարարվածությունը (սոց. հարցումներ)	Բավականին լավ	լավ
Ոլորտ 9. Մշակույթ և երիտասարդության հետ փոքրվող աշխատանք			
Կազմակերպել համայնքի մշակութային կյանքը, խթանել մշակութային միջոցառումներին երիտասարդների ակտիվ մասնակցությունը:	Մշակութային ծառայությունների որակից և երիտասարդության հետ տարվող աշխատանքների մակարդակից բնակչության բավարարվածության աստիճանը (սոց. հարցումներ)	Բավականին լավ	լավ
Ոլորտ 10. Առողջապահություն			
Բարձրացնել համայնքում առողջապահության որակը և մատչելիությունը:	-	Լավ	Շատ լավ
Ոլորտ 11. Ֆիզիկական կուլտուրա և սպորտ			
2021 թվականի ընթացքում ոլորտում ծրագրեր և միջոցառումներ չեն նախատեսվում, այդ պատճառով ոլորտային նպատակ չի սահմանվել:	-	-	-
Ոլորտ 12. Սոցիալական պաշտպանություն			
Բարելավել սոցիալապես անապահով ընտանիքներին տրամադրվող սոցիալական աջակցության հասցեականությունը և որակը:	Սոցիալական ծրագրի առկայությունը համայնքում (այո/ոչ)	այո	այո
	Սոցիալական ծրագրի շահառուների բավարարվածությունը իրականացվող ծրագրից	Բավականին լավ	Լավ
Ոլորտ 13. Գյուղատնտեսություն			
2021թվականի ընթացքում ոլորտում իրականացնել հետազոտական աջատանքներ:	Գյուղատնտեսության ոլորտի զարգացման ծրագրի առկայությունը (այո/ոչ)	ոչ	ոչ
	Գյուղ. տեխնիկայով և գործիքներով համայնքի ապահովվածությունը	-	-

Ոլորտ 14. Անասնաբուծություն և բուսասանիտարիա

2021 թվականի ընթացքում ոլորտում ծրագրեր և միջոցառումներ չեն նախատեսվում, այդ պատճառով ոլորտային նպատակ չի սահմանվել:	-	-	-
--	---	---	---

Ոլորտ 15. Շրջակա միջավայրի պահպանություն

Ապահովել համայնքի բնակչությանը աղբահանության և սանիտարական մաքրման որակյալ և մատչելի ծառայությունների մատուցումը և շրջակա միջավայրի մաքրությունը:	Համայնքի բնակիչների և ձեռնարկատերերի բավարարվածությունը աղբահանության և սանիտարական մաքրման աշխատանքներից (սոց. հարցումներ)	Բավականին լավ	Լավ
	Աղբահանության կազմակերպման նպատակով բնակչության հետ կնքված պայմանագրերը, (%)	100	100
	Աղբահանության կազմակերպման նպատակով իրավաբանական անձանց հետ կնքված պայմանագրերը, (%)	100	100
	Աղբահանության և բնապահպանության ոլորտին վերաբերվող առկա ծրագրերի թիվը	1	2

Ոլորտ 16. Հրոսաշրջություն

2021 թվականի ընթացքում ոլորտում ծրագրեր և միջոցառումներ չեն նախատեսվում, այդ պատճառով ոլորտային նպատակ չի սահմանվել:	-	-	-
--	---	---	---

Ոլորտ 17. Տեղական ինքնակառավարմանը բնակչության մասնակցություն

2021 թվականի ընթացքում ոլորտում ծրագրեր և միջոցառումներ չեն նախատեսվում, այդ պատճառով ոլորտային նպատակ չի սահմանվել:	-	-	-
--	---	---	---

2. Համայնքի 2021 թ. ծրագրերի ցանկը և տրամաբանական հենքերը (ըստ ոլորտների)

Ստորև ներկայացված են ՏԱՊ-ի այն ծրագրերը, որոնք ապահովված են համապատասխան ֆինանսական միջոցներով:

Աղյուսակ 3. ՏԱՊ-ի ծրագրեր, որոնք ապահովված են համապատասխան ֆինանսական միջոցներով

Հ/Հ	Ծրագրի անվանումը	Ծրագրի արժեքը (հազ. դրամ)	Բնակավայր(եր)ը
Ոլորտ 1. Ընդհանուր			
1.	Համայնքապետարանի աշխատակազմի պահպանում, համայնքային որակյալ ծառայությունների մատուցում և աշխատակազմի ինստիտուցիոնալ կարողությունների զարգացում	45051.0	Համայնքում
	Ընդամենը	45051.0	
Ոլորտ 2. Քաղաքաշինություն և կոմունալ տնտեսություն			
1.	Վերին Պտղնի համայնքի արտաքին լուսավորության համակարգի ցանցի վերանորոգում	1150.0	Համայնքում
	Ընդամենը	1150.0	
Ոլորտ 3. Կրթություն			
1.	Համայնքում նախադպրոցական կրթության ծառայության մատուցում	78752.0	Համայնքում
	Ընդամենը	78752.0	
Ոլորտ 4. Մշակույթ և երիտասարդության հետ փարվող աշխատանքներ			
1.	Համայնքի մշակութային կյանքի կազմակերպում	300.0	Համայնքում
	Ընդամենը	300.0	
Ոլորտ 5. Սոցիալական պաշտպանություն			
1.	Աջակցություն համայնքի սոցիալապես անապահով ընտանիքներին	901.0	Համայնքում
	Ընդամենը	901.0	
Ոլորտ 6. Երջակա միջավայրի պահպանություն			
1.	Համայնքի աղբահանության և սանիտարական մաքրման աշխատանքների կազմակերպում	900.0	
	Ընդամենը	900.0	
Ոլորտ 7. Բնակարանային շինարարություն և կոմունալ ծառայություն			
1.	Համայնքի ջրագծի ցանցի կառուցում	7700.0	
	Ընդամենը	7700.0	
Ոլորտ 8. Շենքերի և շինությունների կառուցում			
1.	Համայնքային շենքի կառուցում	20000.0	

	Ընդամենը	20000.0	

Ստորև ներկայացված են ՏԱՊ-ով նախատեսված ծրագրերի տրամաբանական հենքերը՝ ըստ համայնքի ղեկավարի լիազորությունների ոլորտների:

Աղյուսակ 4. ՏԱՊ-ով նախատեսված ծրագրերի տրամաբանական հենքերը՝ ըստ համայնքի ղեկավարի լիազորությունների ոլորտների

Ամփոփ նկարագիր	Արդյունքային ցուցանիշներ	Տեղեկատվության աղբյուրներ	Պատասխանատու	Ժամկետ	Ռիսկեր
Ոլորտ 1. Ընդհանուր					
Ոլորտային նպատակ. Բարելավել ՏԻՄ-երի, համայնքապետարանի աշխատակազմի և համայնքի բնակչությանը մատուցվող հանրային ծառայությունների որակը:		Ոլորտի ազդեցության (վերջնական արդյունքի) ցուցանիշ. 1. Համայնքի բնակիչների բավարարվածությունը ՏԻՄ-երի աշխատակազմի մատուցված ծառայությունների որակից (սոց. հարցումներ) - բավականին լավ 2. Համայնքի բյուջեի սեփական եկամուտների տեսակարար կշիռը բյուջեի ընդհանուր մուտքերի կազմում, 102, 6 %			
Ծրագիր 1. Համայնքապետարանի աշխատակազմի պահպանում, համայնքային որակյալ ծառայությունների մատուցում և աշխատակազմի ինստիտուցիոնալ կարողությունների զարգացում					
Ծրագրի նպատակ. Ապահովել աշխատակազմի բնականոն գործունեությունը, բարելավել բնակչությանը մատուցվող հանրային ծառայությունների որակը և զարգացնել համայնքապետարանի ինստիտուցիոնալ կարողությունները	Ծրագրի ազդեցության (վերջնական արդյունքի) ցուցանիշ. 1. Ապահովվել է աշխատակազմի բնականոն աշխատանքը և բնակչությանը մատուցված հանրային ծառայությունների որակը - բավականին լավ 2. Աշխատակիցների գիտելիքների և հմտությունների աճը - 10 %-ով	Ծրագրի գնահատման համակարգ. ԱԳ կիսամյակային և տարեկան հաշվետվություններ	Համայնքի ղեկավար, աշխատակազմի քարտուղար	2021թ. հունվար – 2021թ. դեկտեմբեր	Համապատասխան ռեսուրսներ առկա են
Միջանկյալ արդյունք 1. Ապահովվել է աշխատակազմի բնականոն գործունեությունը և բարձրացել են	Ելքային ցուցանիշներ (քանակ, որակ, ժամկետ). 1. ՏԻՄ-երի, համայնքապետարանի աշխատակազմի գործունեության	Տեղեկատվության աղբյուրներ. Աշխատակազմ, ԱԳ կիսամյակային և տարեկան հաշվետվություններ	Համայնքի ղեկավար, աշխատակազմի քարտուղար	2021թ. հունվար – 2021թ. դեկտեմբեր	Համապատասխան ռեսուրսներ առկա են

<p>աշխատակիցների տեխնիկական և մասնագիտական կարողությունները:</p>	<p>վերաբերյալ բնակիչների իրազեկվածության աստիճանը (սոց. հարցումներով)- լավ 2.ՏԻՄ-երի կողմից բնակչությանը մատուցված հանրային ծառայությունների թիվը- 4 3. ՀԿՏՀ-ում օգտագործվող ծրագրերի թիվը - 1 4.Մասնագիտական վերապատրաստում անցած համայնքային ծառայողների թիվը - 4 5.Տարվա ընթացքում աշխատակազմի աշխատանքային օրերի թիվը՝ 252 6. Երազրի իրականացման ժամկետը -1 տարի</p>	<p>եր. բնակիչներ</p>			
--	--	----------------------	--	--	--

<p>Միջոցառումներ (գործողություններ)</p> <ol style="list-style-type: none"> 1.Աշխատակազմի պահպանություն 2.Հողի հարկի և գույքահարկի ավտոմատացված համակարգերի սպասարկում, բազաների ճշգրտում 3.Համայնքի անշարժ գույքի կառավարում 4.Համայնքապետարանի շենքի և գույքի ընթացիկ նորոգում 5. ՏԻՄ-երի, աշխատակազմի աշխատողների մասնագիտական վերապատրաստման կազմակերպում 6. Համայնքային քաղաքականությունների, ծրագրերի մշակում և կառավարում 7. Աշխատակազմի աշխատակիցներին անհրաժեշտ համապատասխան տեխնիկական և ծրագրային միջոցներով ապահովում 	<p>Մուտքային ցուցանիշներ (ներդրված ռեսուրսներ)</p> <ol style="list-style-type: none"> 1.Համայնքի բյուջեով նախատեսված աշխատակազմի պահպանման ծախսեր՝ 39000.0 հազ. դրամ 2.Համայնքապետարանի աշխատակազմի աշխատողներ՝ 11 3.Համայնքի հողի հարկի և գույքահարկի գանձման ավտոմատացված համակարգ՝ 4.Համայնքապետարանի վարչական շենք և գույք 5.Համայնքի կառավարման տեղեկատվական համակարգ (ՀԿՏՀ) 6. Աշխատակազմի կառուցվածք և կանոնադրություն – առկա է Ֆինանսավորման աղբյուրը՝ համայնքի բյուջեի միջոցներ
--	---

<p>Միջանկյալ արդյունք 2. Բարձրացել է համայնքի բյուջեի սեփական եկամուտների հավաքագրման մակարդակը:</p>	<p>Տեղեկարկություն և աղբյուրներ. ՄԳ կիսամյակային, տարեկան հաշվետվություններ</p>	<p>Աշխատակազմի քարտուղար, աշխատակազմի ֆին. քաժնի պետ.</p>	<p>2020թ. հունվար – 2020թ. դեկտեմբեր</p>	<p>Համապատասխան մարդկային, նյութական և ֆինանսական ռեսուրսները առկա են եղել</p>	
---	--	---	--	--	--

<p>Միջոցառումներ (գործողություններ)</p> <ol style="list-style-type: none"> 1.Գույքահարկի, հողի հարկի, տեղական տուրքերի և վճարների գանձման աշխատանքներով զբաղվող աշխատակիցների ռաուցում և վերապատրաստում 	<p>Մուտքային ցուցանիշներ (ներդրված ռեսուրսներ)</p> <ol style="list-style-type: none"> 1.Հարկերի, տուրքերի և տեղական վճարների գանձման աշխատանքներով զբաղվող
---	--

<p>2. Հարկերի և տուրքերի պարտքեր ունեցող քաղաքացիների ծանուցում, նրանց հետ անհատական աշխատանքների ծավալում</p> <p>3. Վարչարարության լծակների ուժեղացում՝ հարկային պարտականությունները չկատարողների նկատմամբ դատարան կամ ԴԱՀԿ հայցադիմումների ներկայացում</p>		<p>մասնագետ՝ 1</p> <p>2. Համայնքապետարանում հողի հարկի և գույքահարկի բազաներ՝ 1</p> <p>4. Համայնքի բյուջեի սեփական եկամուտների զծով անկա ապառքներ – Օդրամ</p>			
<p>Միջանկյալ արդյունք 3. Բարելավվել է ՏԻՄ-երի կողմից բնակչությանը մատուցված հանրային ծառայությունների որակը և մատչելիությունը, աշխատակազմի կողմից ապահովվել է համայնքի ղեկավարի և համայնքի ավագանու լիազորությունների արդյունավետ իրականացումը</p>	<p>Ելքային ցուցանիշներ (քանակ, որակ, ժամկետ).</p> <p>1. Համայնքապետարանում բնակիչների սպասարկման «մեկ պատուհան» սկզբունքի կիրառումը- կիրառվում է</p> <p>2. Քաղաքացիների դիմում-գանգատներին պատասխանելու միջին ժամկետը՝ 3օր</p> <p>5. Համայնքի ավագանու և համայնքի ղեկավարի մոտ քաղաքացիների ընդունելությունների թիվը՝ 98</p>	<p>Տեղեկատվության աղբյուրներ. Աշխատակազմի քարտուղար, կիսամյակային և տարեկան հաշվետվություններ</p>	<p>Համայնքի ղեկավարի տեղակալ, աշխատակազմի քարտուղար</p>	<p>2020թ. հունվար – 2020թ. դեկտեմբեր</p>	<p>Համապատասխան մարդկային, նյութական և ֆինանսական ռեսուրսները անկա են եղել</p>
<p>Միջոցառումներ (գործողություններ)</p> <p>1. Աշխատակազմի աշխատողների արդյունավետ և թափանցիկ աշխատանքի ապահովում</p> <p>2. Համայնքի ֆինանսական միջոցների արդյունավետ և թափանցիկ կառավարում</p> <p>3. Համայնքի գույքի և հիմնական միջոցների կառավարման բարելավում</p> <p>4. Համայնքապետարանի աշխատակազմում անկա տեղեկատվական համակարգերի շահագործում և պահպանում</p> <p>5. Աշխատակազմի աշխատակիցների աշխատանքային պայմանների բարելավում</p>		<p>Մուտքային ցուցանիշներ (նեղոքված ռեսուրսներ)</p> <p>1. Համայնքապետարանում անկա համակարգչային սարքեր՝ 7</p> <p>2. Աշխատակազմի տեղեկատվական և հեռահաղորդակցության համակարգեր՝ 3</p> <p>3. Աշխատակազմում ֆինանսների և գույքի կառավարման, ինչպես նաև ոլորտային հարցերով զբաղվող մասնագետներ՝ 2</p> <p>4. Աշխատակազմում տեղեկատվական համակարգերի կառավարման հարցերով զբաղվող մասնագետ՝ 1</p> <p>5. Համայնքի պաշտոնական համացանցային կայք - անկա է</p> <p>6. ՏԻՄ-անընկալիչների մասնակցության կարգեր - 3</p>			
<p>Ոլորտ 4. Քաղաքաշինություն և կոմունալ տնտեսություն</p>					
<p>Ոլորտային նպատակ. Իրականացնել բնակավայրային շինարարության, կոմունալ ենթակառուցվածքների ընդլայնման, բարեկարգման և պահպանման աշխատանքներ</p>		<p>Ոլորտի ազդեցության (վերջնական արդյունքի) ցուցանիշ.</p> <p>1. Գիշերային լուսավորության ցանցի տեսակարար կշիռը ներբնակավայրային ճանապարհային ցանցի մեջ - 90%</p> <p>2. Գիշերային լուսավորվածությունից բնակիչների բավարարվածությունը (սոց. հարցումներ) - գերազանց</p>			

	<p>3. Ջրամատակարարման ծառայությունից բնակիչների բավարարվածությունը (սոց. հարցումներ) - բավարար</p> <p>4. Համայնքապետարանի և համայնքային կազմակերպությունների կողմից էլ.էներգիայի տարեկան ծախսումների նվազեցում - 5%-ով</p> <p>5. Համայնքային շենքի կառուցում</p>
